ՍԱՍՄԱՅ ԾՌԵՐ

(Արարատի բարբառով.)

Ա.

ՍԱՆԱՍԱՐ ԵՒ ԱՍԼԻՄԵԼԻՔ

Ժամանակով մէկ թագաւոր կ'էղնի, անուն Սենեքերիմ։ Սենեքերիմին էրկու տղայ կ'էղնի, մէկի անուն Սանասար, մէկին Ասլիմելիք։ Սենեքերիմ ինք կռապաշտ էր, տղեկներ աստուածապաշտ։

Խոշուն էրեց ու գնաց Էրուսաղամայ վրէն կռիւ։

Եօթ տարի քաղքի բոլոր խոշուն չափրռնեց նստաւ։

Թանգուտեն ընկաւ քաղքի մէջ. թագաւորն, ուր [1]) վազիր դաւրէշ խըլըղի էղան ու ընկան քաղքի մէջ. էրկու [2]) պառաւու ռաստ էկան, տեսան, որ իրարու հետ կռիւ կ'էնին. հարցուցին թէ՝— Ցո՞րի կըկռուիք։

Մէկ պառաւ վերցուց թէ՝—Դաւրէշ Բաբա, թանգուտեն ընկեր ա էրկիր, հացներս ի խըսեր ա. ընձի տղէ՝մ ունէնք, բերեցի մորթինք, կերանք. մայ էնի ուր տղէն չ'բերա, մորթինք, ուտինք։

Վերցուց թագաւոր ուր վազիրին ըսեց.—Մեր թագաւորուտեն իսկի մէկ թագաւորուտեն ի չէ։

—Ըբա, [3]) ըսեց, ի՞նչ էնինք, վազիր։

---

[1]) Այս բարբառում իւ երկբարբառը ու—ի է փոխուում, օր. ուր, սուն, ձուն, առուծ, էրկուղ, աղուր, ախպուր, արուն։

[2]) Բառի սկզբում ե միշտ է է դառնում. օր. էրկու, էրկիր էրդիկ, էրկէն, էկեղեցի, էրեխայ, էրկանք, Էրուսաղէմ, էզ, էրես։

[3]) Ա ձայնաւորը երբեմն ը-ի է փոխուում. օր. ըբա (ապա), ըհա, ըղուրդ (ուրիշ բարբառներում աղուրդ), ըմեն, քընց, ՅԸՐ (յար, մինչև)։